

## **Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

# **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**

**«06» ՄԱՅԻՍԻ 2014 Թ. N 40-Ա ՀՐԱՄԱՆԻՑ**

### **ԽԱԶԱՏՈՒՐ ՏՈՆՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «զ» ենթակետը.

### **Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

Խաչատուր Ժորայի Տոնոյանին 2014 թվականի մայիսի 6-ից, երեք ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի օգնականի պաշտոնում:

Աշխատավարձը՝ ըստ հաստիքային ցուցակի:

Հիմք՝ Խ.Տոնոյանի անձնական դիմումը:

**Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**